



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

No. 20-Ճ

«Օձ» Հեկտեմբեր 2019թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2014
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 16-Ի ԹԻՎ 25-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. ՀՀ կրթության և գիտության նախարարի 2014 թվականի հունվարի 16-ի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ներքին գործավարության կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2003 թվականի հոկտեմբերի 07-ի N 678-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 25-Ն հրամանի (այսուհետ՝ հրաման) վերնագրում և 1-ին կետում «կրթության և գիտության նախարարության աշխատակազմի» բառերը փոխարինել «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության» բառերով, իսկ «համաձայն» բառից հետո լրացնել «1-ին» բառը:

2. Հրամանի հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն 1-ին հավելվածի:

3. Հրամանը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1, 1.2, 1.3 և 1.4 կետերով.

«1.1 Հաստատել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունում օգտագործվող կնիքների և դրոշմակնիքների ցանկը՝ համաձայն 2-րդ հավելվածի:»:

«1.2 Հաստատել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունում կնիքների և դրոշմակնիքների կիրառման կարգը՝ համաձայն 3-րդ հավելվածի:»:

«1.3. Սահմանել, որ՝

1) 1.1-ին կետում նշված կնիքներից կամ դրոշմակնիքներից բացի Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունում այլ կնիքներ կամ դրոշմակնիքներ չեն կիրառվում, բացառությամբ նախարարի, նախարարի տեղակալների և գլխավոր քարտուղարի կողմից.

2) 1.2-րդ կետով հաստատված կարգում նշված փաստաթղթերից բացի Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունում այլ փաստաթղթեր կնքվում կամ դրոշմակնքվում են միայն նախարարի, նախարարի տեղակալների և գլխավոր քարտուղարի կողմից ստորագրված լինելու, իսկ այլ պաշտոնատար անձանց կողմից ստորագրված լինելու դեպքում՝ նախարարի կամ գլխավոր քարտուղարի համաձայնությամբ:

3) «1.4. Կնիքներ և դրոշմակնիքներ պատվիրելու պարտականության իրականացման ապահովումը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կազմակերպատնտեսական վարչությանը:»:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱՐԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

02.10.2019

X 

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Signed by: HARUTYUNYAN ARAYK 1209790378